Դաւիթ ձին քշեց վրէն ու գուրզ քաշեց, օր զարկէր. հասաւ, օր զարկէր, յեդբուանց ծամեր թողեց։

Դաւիթ ըսեց.—Հէ՛ գիդի, ֆոզ, իդա լէ էրկու դագ կ'բերիս իմ գլոխ. իդա գուրզ պդի մնայ իմ կշտէս ի կախ, չուրի էրթամ, զարկիմ քու հօր քօշկ ու սարին։

Գնաց, հասաւ Կապուտկողզ. օր հասաւ, գուրզ թալեց, քօշկ ու սարի բադան բլուց։

Տարաւ գլոխ, դրեց թագաւորի առէջ։

Ու թագաւոր բերեց դհոլչի, զուռնաչի ու Խանդութ խանում իցկեց Դաւթի էդև, տարան ժամ ու պսակեցին։

Դ.

ՊԶՏԻԿ ՄՀԵՐ

Տարի մի ընցաւ, մէկ տղայ էղաւ, անուն դրին Մհեր[1]։

Մհերն էղաւ տըսնուհինգ տարեկան։

Դաւիթ էլաւ, գնաց թագաւորին խնդրուաւ թէ՝—Ընձի իզին տաս, ես էրթամ իմ քաղաք։

Ըսեց.—Օր կ'երթաս, Աստուած հետ քըզի էղնի, գնա՛. ըմա, ըսեց, Մհերին չըմ իտայ տանիս, Մհեր մնայ իմ կուշտ։

Դաւիթ առաւ ուր կնիկ ու գնաց. գնաց, հասաւ Զմլկեր Սուլթանի հողի մէջ. Զմլկեր սուլթանի ախչիկ խոշուն էրեց[2]) ու

---

[1]) Ա. վարիանտով այս Մհերի մականունը «պզտիկ» է. «տղի անուն դրեցին պզտիկ Մհեր»։ Այսպէս է կոչուում, երևի, Առուծաձեւ Մհերից զանազանուելու համար։ Երևայի ձեռքը խուփ էր, և երբ հայրը սղմելով բաց արեց, մէջը լերդ լերդ արիւն տեսաւ,—իդա ընձնէ շատ արունք պդի էնայ—գուշակեց Դաւիթ։

[2]) Ա. վարիանտով խլաթցիք են Դաւթի առաջը կտրում իրենց անպատուութեան վրէժը հանելու համար. Դաւիթ Խանդութի մօտ գնալու ժամանակ սիրային յարաբերութիւն էր ունեցել խլաթցոց սոֆու (իշխանի, աղայի) այրի կնոջ հետ։ «Սասունայ ծուռ Դաւիթն էղնես, գաս մըր աղի կնիկ սիրիս, մըր կռիւ կռիւ ա», ասում էին խլաթցիք։